ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 64 - Ա **26 ապրիլի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ << ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԿ>>, << ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ>> ԵՎ << ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ>> ՍՏՈՒԳԱՏԵՍՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, <<Մանկապատանեկան սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ, 1.19-րդ կետերի և 2004թ. մայիսի 20-ի ՆԿ-113-Ն կարգադրության պահանջներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի փետրվարի 22-ի <<Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> և <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> հանրապետական ստուգատեսների կանոնակարգերը հաստատելու մասին>> N 32-Ա/1 հրամանը

կարգադրում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2016 թվականին Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> և <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> ստուգատեսները կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2016 թվականին Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> և

<<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> ստուգատեսները կազմակերպելու և անցկացնելու ժամանակացույցը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝ ցուցաբերել ակտիվ մասնակցություն Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> և <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> ստուգատեսներին:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի ապրիլի 26-ի
N 64-Ա կարգադրության

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2016 թվականին Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> և <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> ստուգատեսները կազմակերպելու և անցկացնելու կազմկոմիտեի

Հակոբյան Անդրանիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
Բաղալյան Գարիկ – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Գասպարյան Ավետիք – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի տեղակալ
Չարվադարյան Գեղամ - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ
Սաֆարյան Համբարձում – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ
Շահբազյան Հասմիկ – մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ
Քոլոզյան Մարատ - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի վարիչ
Հակոբյան Հենրիկ - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ
Հարությունյան Արամ – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ
Ղազարյան Սերյոժա – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ
Սարգսյան Արտակ - մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության գլխավոր մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թվականի ապրիլի 26-ի
N 64-Ա կարգադրության

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2016 թվականին Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական բակ>>, <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> և <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> ստուգատեսները կազմակերպելու և անցկացնելու

Միջոցառման անվանումը	I փուլի անցկացման ժամանակը	II փուլի անցկացման ժամանակը	Հայտերի ներկայացման ժամկետները		Մրցույթի կազմակերպման և անցկացման պատասխանատու
			I փուլի	II փուլի	
1	2	3	4	5	6
ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական բակ>> ստուգատես	մայիս-օգոստոս	սեպտեմբեր	մինչև սեպտեմբերի 5-ը քաղաքապետարանները ներկայացնում են մարզպետարան	մինչև սեպտեմբերի 15-ը մարզպետարանը ներկայացնում է նախարարություն	Քաղաքային համայնքների ղեկավարներ, մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով ու կրթության, մշակույթի և սպորտի վարչություններ
ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> ստուգատես	մայիս-օգոստոս	սեպտեմբեր	մինչև սեպտեմբերի 5-ը գյուղական համայնքները ներկայացնում են մարզպետարան	մինչև սեպտեմբերի 15-ը մարզպետարանը ներկայացնում է նախարարություն	Գյուղական համայնքների ղեկավարներ, մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով ու կրթության, մշակույթի և սպորտի վարչություններ
ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> ստուգատես	մայիս-օգոստոս	սեպտեմբեր	մինչև սեպտեմբերի 5-ը քաղաքային համայնքները ներկայացնում են մարզպետարան	մինչև սեպտեմբերի 15-ը մարզպետարանը ներկայացնում է նախարարություն	Քաղաքային համայնքների ղեկավարներ, մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով ու կրթության, մշակույթի և սպորտի վարչություններ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ